

ՍԱՐԿԱՆԱԳԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ - 1963

- - - -

Սիրելի Անդամներ,

1963-ը եղաւ դժուարութեանց եւ զանազան անակնկալներով լի եւ սակայն արդիւնաւոր տարի մը, որուն ապահով լրանալուն համար փառք կուտամ Աստուծոյ եւ սիրով կողջունեմ բիլորդ:

Ժամապահացութիւն

Անցնող տարուան ընթացքին, աշխատեցանք կանոնաւոր կերպով ունենալ ամսական պատարագներ, բացի ամառուան երեք ամիսներէն եւ չոկտեմբեր ամիսէն: Հետեւեալ եկեղեցականները այցելած են ծուխս, անցնող տարեցրջանին եւ պատառագով, բարոզչութեամբ եւ դասախոսութիւններով հոգեւորապէս միիթարած մեր համայնքը:- Հոգէ. Տ. Ժիրայր Աբդ. Թաշճեան (Փետր. 3), Արժ. Տ. Առնակ Քչն. Դ. Գասպարեան (Մարտ 10), Արժ. Տ. Տիրան Քչն. Յ. Փափազեան (Ապրիլ 14 եւ Դեկտ. 8), Հոգէ. Տ. Միւռոն Շ. Վրդ. Կրճիկեան (Մայիս 5), Հոգէ. Տ. Խսահակ Շ. Վրդ. Ղազարեան ՔՍԵպտ. 29), եւ Հոգէ. Տ. Եղիշէ Վրդ. Կիզիրեան (Նոյմ. 3): Զանք տարած ենք որ եկեղեցական արարողութիւնները կատարուին անթերի եւ հանդիսաւոր: Անցնող տարուան ընթացքին շարունակեցինք կանոնաւոր կերպով կատարել ձաշութամբերգութիւն, կիրակի առաւօտները, կիրակնօրեայ Դպրոցէն վերջ: Կը ցաւիմ ըսելու որ, հակառակ քանից եղած թելազրութեանց եւ կայտարութեանց, ժամերգութեանց ներկայ եղողներուն թիւը սակաւաթիւ էր: Մեծ Պահքի շրջանին ջորեքմաքթի երեկոներ ունեցանք, Անգլերէն լեզուով, Խաղաղական եւ Հանգստեան ժամերը որ մեծապէս գնահատուեցաւ մասնաւորաբար երիտասարդ տարրին մէջ: Ձերմապէս կը գնահատենք Եկեղեցւոյս վեթերան ուրարակիր Կարպիս Պալտըրեանը որ անթերի կերպով կը կատարէ իր պաշտօնը, Դպրապետ Մուեֆան Սառափեանը որ իր լաւագոյնը կընէ Դպրաց Դասը զարգացնելու եւ տալու մեզի մեր զմայլելի եկեղեցական երաժշտութիւնը, երգեհոնաւար Տիկ. Հայկանուշ Զէքէմեանը, որ իր թանկարժէք մասնակցութիւնը կը բերէ, Դպրաց Դասի բոլոր անդամները, ինչպէս նաև մոմակալներ Մարտիրոս Միհիթարեանը եւ Թովմաս Աթքեանը եւ ձաշութիրք կարդացողներ Ռապըրթ Ապտալեանը, Տիգրան Աթքեանը եւ ելըն Պորազանեանը:

Ծիսակատարութիւն

Անցնող տարեշրջանին ունեցած ենք երեք մկրտութիւն, երկու դրոշմ, երկու ամուսնութիւն եւ մէկ թաղում:

Ալցելութիւններ

Զանացած ենք չթերանալ եւ ժամանակին կատարել միիթարական եւ ցաւական այցելութիւններ, մասնաւորաբար հիւանդանոցները: Տուած ենք ընդամենը 283 այցելութիւններ հետեւեալ առիթներով:- Հիւանդ 22, սգաւոր 2, ընտանեկան հարցեր 35, քոյր եկեղեցիներու 7, բարի գալուստի, ողջերթի, մկըրտութեանց եւ զանազան առիթներու եւ հաւաքոյթներու 68, ծխական այցելութիւններ 149:

Գրասենեակի աշխատանք

Մեր հոս գալէն անմիջապէս վերջ, սկսանք կարգի դնել Գլիկլէնտի հա-

Սարկաւագի Տեղեկագիր - Երես 2

Մայնքին հասցէներու ցանկը։ Մինչեւ թուականս կրցած ենք ճշդել 260 հասցէներ եւ այցելել անցերը, կարել իութեան սահմանին մէջ։ Դասաւորած ենք նաեւ ծուխին բոլոր թղթակցութիւնները 1960-էն սկսեալ։

Դասախոսութիւններ

Առանց նկատի առնելու եկեղեցւոյս ենթակայ մարմիններուն տրուած դասախոսութիւնները, կրնամ յիշել հետեւեալ կազմակերպութիւնները որոնց խօսած եմ հրաւելով։ - Թորոնթոյի Երիտասարդաց Կազմակերպութեան, Տիթրոյթի Հայց։ Եկեղեցւոյ Կիրկ։ Դպրոցի Ծնողաց Կազմակերպութեան, Տիթրոյթի Հ.Ե., Մեծագոյն Գլիվլ էնտի Եպիսկոպոսականաց Երիտ։ Կազմակերպութեան։

Ժողովներ

Ասցնող տարեշրջանին մեր եկեղեցւոյ մարմիններու գրեթէ բոլոր ժողովներուն ներկայ եղած եմ, ընդամէնը 82։ Այս ժողովներէն դուրս ներկայ եղած եմ նաեւ կարգ մը մասնաւոր ժողովներու երբ ուղղութիւն մը տալու կամ դժուարութիւն մը լուծելու հարկը ներկայացած է։

Թե մական Պատգամաւորական ժողով

Մայիս 18 եւ 19, 1963-ի շաբաթավեր ջին ներկայ եղայ Թե մական Պատգամաւորական ժողովին, Թրոյի Ս. Պետրոս Եկեղեցիին մէջ։

Հայց։ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւն

Ներկայ եղայ նաեւ Հ.Ե.Ե.Կ.ի Տարեկան Համագումարին ի Մոնթրէալ, Գանատա, Օգոստոս 21 եւ Սեպտեմբեր 1-2, 1963-ի շաբաթավեր ջին։ Այդ առթիւ ներկայ պատգամաւորներուն տուի դասախոսութիւն մը էկումենական Շարժման մասին, բնորոշելով Ամերիկայի Հայ Երիտասարդութեան դերը այդ Շարժումին մէջ։

Ամառնալին Աշխատանք

Առաջնորդ Սրբազն Հօր կարգադրութեամբ եւ Ծիական Խորհուրդիս բարիացակամութեամբ Յունիս ամսուան սկիզբը գացի Ս. ներսէս Աստծ. Դպրոցը էվընսթընի մէջ, կարգ մը դասընթացքներու հետեւելու։ Յուլիս ամսուան սկիզբը մեկնեցայ Գերշ. Տ. Տիրան Արք. ներսոյեանի հետ Մոնթրէալ, Գանատա, մասնակցելու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին Հաւատքի եւ Կարգի Տասնամեայ Համագումարին, իբրև Հիւր ներկայացուցիչ եւ քարտուղար. Տիրան Սրբազնի, Հայց։ Եկեղեցւոյ Կողմէ։ Ներկայ էին մօտաւորապէս 500 աստուածաբաններ եւ Եկեղեցականներ աշխարհի բոլոր կողմերէն։ Ինձի Համար, այս մօտ մէկ ամիս տեւող ժողովը եղաւ առիթ մը մօտէն ծանօթանալու էկումենական շարժման եւ նպատակին։ Օգոստոսի սկիզբը Մոնթրէալ էն մեկնեցայ Հիւրիսային Միշիկըն, Տիթրոյթի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ Կիրկ։ Դպրոցին կազմակերպած առաջին Քէմբը, իբրև Հոգեւոր առաջնորդ եւ տեսուչ։ Կը գուսանք որ գալիք ամառուան ընթացքին կարգադրութիւն կը լայ մեր Սուլիէն ալ փոքրեր դրկել սոյն Քէմբը։ Սեպտեմբերի սկիզբը վերադարձայ Գլիվլ էնտ պաշտօնիս։

Հայ Դպրոց

1963-ի առաջին շրջանին հաստատեցինք փոքրերու համար երկու Հայ Լեզուի դպրոցներ, մին Գլիվլ էնտի հսկ միւսը եքրընի մէջ։ Երկուքն ալ յաջող կերպով աւարտեցին իրենց շրջանը անցեալ Մայիսին։ Կը ցաւիմ ըսելու

Սարկաւագի Տեղեկագիր - Երես 3

որ, կարելի չեղաւ դարձեալ սկսիլ այս դպրոցները Սեպտեմբերին։ Ծնողներու վրայ ծանր պարտականութիւն կիյնայ լրջօրէն նկատի առնել այս խնդիրը եւ վերաբանալ այս դպրոցները փոքրերու հայեցի դաստիարակութեան, եւ զարգացման համար։ Այս առթիւ կը փափաքիմ հոս յիշել որ, անցնող նոյեմբերին սկսանք մեծերու պատմութեան եւ եկեղեցական գիտելիքներու դասարան մը որ յաջողութիւն գտաւ եւ կը շարունակուի երկշաբաթական հանդիպումներով։

Ծխական թերթիկ

Անցեալ տարի շարունակեցինք հրատարակել ծուխիս թերթիկը - ՓԱՐՈՍ - Հայերէն եւ Անգլերէն բաժիններով։ Ինչպէս անցեալին ըսած ենք, այս թերթիկը առաւել ծախք մըն է Ծխական նորմուրդին վրայ եւ անհատական նուէրներ մեծապէս կը գնահատուին։ Թերթիկէն զատ, ձեռնարկներու եւ այլ առիթներով զրկած ենք մասնաւոր յայտարարութիւններ։ Փարոսի տպաքանակն է 360։

Թելադրութիւններ

Ծուխիս կը օնական, եկեղեցական եւ ազգային-մշակութային կեանքի յառաջդիմութեան տեսակէտին անհրաժեշտ կը համարենք հետապնդումը այս տարեշրջանին, հետեւեալ կարեւոր կէտերուն։

ա. ՓԱՐՈՍ թերթիկի աւելի ճոխ հրատարակման համար պէտք է կազմուի խմբագրական կազմ մը, թերթին աշխատանքները լաւագոյնս յառաջ տանելու համար։

բ. Գրասենեակի գործերը, մէջն ըլլալով Փարոսի հրատարակութիւնը, աւելի կանոնաւոր ընելու համար պէտք ունինք ծալլիչ եւ հասցէագիր մեքենաներու, որոնք այլեւս անհրաժեշտ կը դառնան։

գ. Մեր պատանիներն ու երիտասարդները եկեղեցւոյ եւ հայ հարազատ մշակոյթին ընտանի դարձնելու եւ զանոնք ուղիղ առաջնարդելու համար պէտք է կազմուի յանձնախումբ մը, ծրագիր մը մշակելու եւ բանալու հայ լեզուի, պատմութեան եւ երգի դպրոց մը ծուխէս ներս։

դ. Մասնաւոր ուշադրութեան առարկայ պէտք է դառնայ եկեղեցւոյս հպրաց Դասը որ այդքան կարեւոր մէկ մասնիկն է եկեղեցւոյս։ Զօրաւիգ պէտք է կանգնինք անոր զօրացման եւ բարգաւաճման համար։

Այս նոր տարուայ սեմին մեր բոլորին գերագոյն պարտականութիւնը պէտք է ըլլայ անդրադառնալ այն հսկայ աշխատանքին եւ նուիրումին որ մեզէ իւրաքանչիւրը պիտի բերէ յառաջիկային, Աստուծոյ օգնութեամբ եւ առաջնորդութեամբ, մեր Սոււրբ Եկեղեցւոյ պայծառութեան եւ բարգաւաճման համար։ Քիչ վերջ պիտի տեղեակ ըլլաք եւ հաստատէք 1964-ի պիւտճէն։ Նկատի ունենալով որ նիւթական դրամը կարեւոր է եկեղեցւոյ առօրեայ գործերուն յառաջացման համար, բոլորիդ լուրջ նկատառման կը յանձնեմ տարեվճառներու հարցը։ Լրջօրէն պէտք է մտածէք այս խնդրի մասին եւ ծեր խղճի ձայնին անսալով, աւելցնէք ծեր տուրքերը։ Այսօր չկայ մեր ծուխին մէջ ընտանիք մը որ 5000 տոլարէն պակաս եկամուտ ունի (բացառութիւնները յարգելի են)։ Եթէ իւրաքանչիւր ընտանիք իր շահածին ՄԻԱՅՆ 100ին 1-2 տոկոսը տայ եկեղեցիին, արդէն իսկ յաջողած կը լւանք մեր բոլոր ծրագիրներուն մէջ։ Այս տարիշ որ անկիւնադարձ մը պիտի ըլլայ մեր համայնքի պատմութեան մէջ, շատ աւելի կարեւոր պիտի դառնայ ձենչ իւրաքանչիւրին բարոյական եւ նիւթական լայն աշակեցութիւնը։ Բոլորս ալ առաւել կամ նուազ պաշտօններ ունինք այս համայնքին մէջ, մեր Հայրերուն հաւատքը եւ մեր ազգային ժառանգութիւնները պահելու եւ յաւերժացներու։ Աստուծոյ

Սարկաւագի Տեղեկագիր - Ֆուս 4

Այդիին մէջ ջանանք ըլլալ հաւատաւոր, օգտակար եւ բարի մշակներ, ու լաւագոյնս արդի ևնաւորենք մեր պարտականութիւնները։ Մեր նախահայրերը հաւատքով ապրեցան, ստեղծագործեցին ու կտակեցին իրենց մտքին ու հոգիին արդիւնքները։ Շարունակենք անոնց սուրբ գործը եւ նախանձախնդիրը ըլլանք մեր հոգեւոր ժառանգութեանց պահպանման։ Մէկ կողմ պէտք է դնենք անձնական հաշիւները, անցեալի ցաւերը, թշնամութիւնները եւ գաղափարի տարբերութիւնները ու յառաջանանք նոր իտիալներով եւ Սիրոյ օրէնքին ներմուծումովը մեր կեանքերէն ներս։ Եկեղեցւոյ շէնքին շինութիւնը վեր ջացաւ ձեր բոլորին օգնութեամբ։ այժմ կսկսի բուն գործը կարենալ պահելու զայն։ Նուիրենք մեր բիլոր ջանքերը այս կոթողական գործին յաջողութեան եւ շարունակման համար։ Սրտագինս կ'աղօթեմ որ Աստուծոյ հովանին անպակաս ըլլայ մեր բոլորին վրայէն, զօրացնէ զմեզ, աւել ցնէ մեր եռանդը եւ օրհնէ մեր սրտին ու մտքին աշխատանքները։ Ամէն։

